Այս գիւղն 83 թուին քուրդ բնակութիւն չը-կար, Մուրատ բէկ անուանեալ քուրդն այս տեղ Ջրաղացք մի ունէր, տակաւ առ տակաւ տան տան չափ քրդեր այս գիւղըս հաստատեց, որոց յանձնեց հայոց կալուածներու մեծ մասն, որով հայերն որք խիստ լաւ վիճակ մը ունէին, աղքատացած են։

Խոշեանայ Աւտալի և Մուրատի (հայ) տներն ամբողջ Բագրեւանդայ մէջ կը յիշուին մինչև ցայսօր, թէ ինչպէս հացալից են և հիւրասէր։ Խաղեաղէն 3—4 ժամ իջնող ճանապարհորդն, նաև Զըլկանի գիւղից 3 ½ ժամ եկողն և Խաստուրէն ի Մօլլա-սիւլէյման, թ. գալէէն Շեռեանայ գլուխ անցնողներն այս գիւղը պիտի օթեւանին, այս երկու տներու մէջ իւրեանց քաղցը յագեցնելով պիտի անցնին։

Գիւղս հաստատուած է հինգ տարիէ ի վեր, մի Արճիշեցի քահանայ որ ժիր երկրագործ է, վիճակը ևս բարւոքած։

Այս գիւղն երբէք ուսումնարանի երես տեսած չէ, ունի մի խարխուլ մութ եկեղեցի Ս. Յակոբ անունով։

Գիւղիս արևմտեան ծայրն կայ մի ընդարձակ գերեզմանատուն, որ ունէր մեծամեծ խաչ քարինք, զորս հանած է վերոյիշեալ քուրդ Մուրատ բէկն և իւր Ջրաղացքը շինած։

Յաւալի էր այդ յիշատակարաններով լեցուն քարերն Ջրաղացքի ոլմերուն մեծ մասն բռնած տեսնել։

Մի քանի քար կար մնացած գերեզմանատան մէջ ցրուած, որ հազիւ կարողացած եմ մէկն ընթեռնուլ. այս։

«Գաբրիէլ ծառայ Քրիստոսի փոխեցաւ առ Աստուած, կէս օր եմ եկել ի ծնողաց իմոց, դպիր աղօթս արարէք»։